




Carav

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ S. S. ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՑՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԳԱՀՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼԸ

Մայր Աթոռում այս տարի էլ, սեպտեմբերի 29—30 օրերին, ավանդական շուրջով ու հանդիսավոր իրադրության մեջ նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության 18-րդ տարեարձը:

Պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան այդ օրերը և խոստումնալից մի նոր հանդրվան Մայր Աթոռ ու Էջմիածնի և նրա արժանքների գահակալի եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության ճանապարհի վրա:

Անցնող 18 տարիները եղան լարված աշխատանքի, հոգևոր, մշակութային, շինարարական և հայրենասիրական-խաղաղասիրական գործունեության ատոռ տարիներ՝ ի ոգևորիչ արդյունքներով, շնորհիվ Հայոց Հայրապետի աննկուն և անկոտում հավատքի, գործելու անվիտ եռանդի և Իր քարձը անձնավորության ու պաշտօնի ներշնչած տիրական հետինակության. «զի այսպիսի հսկ վայել էր մեզ Քահանայապետ» (Եր. Է 26):

Հանձնի Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի հայ եկեղեցին և մեր ժողովուրդը ունեցան մեր պատմության լուսամիտ, հայրենանվեր ու շինարար հայրապետներից մեկը, որն Իր ուսերի վրա կրում է հայրապետական ծանրության պատասխանատու լուծը կոչման և ծառայության խորին գիտակցությամբ դեպի իր եկեղեցին, ազգն ու հայրենիքը:

Ահա թե ինչու վերջին տարիների ընթացքում հայրապետական գահակալության տարեարձները հանդիսացել են մեր օրերի

ազգային-եկեղեցական տարեգրության մեջ գեղեցիկ ու սրտագին ավանդությթ, երբ այդ ուրախ առիթով Մայր Աթոռ են ժամանում հոգևորական ու աշխարհական Աերկայացուցիչներ սփյուռքի և մայր հայրենիքի թեմերից՝ բաժանելու Մայր Աթոռի ուրախությունն ու խանդավառությունը, և երբ այդ առիթվ դարձյալ Մայր Աթոռում տեղի են ունենում հիշատակության արժանի պատմական հանդիսություններ, հորելյաններ, որոնց շնորհիվ հայ ժողովուրդն ամբողջ, որ ի սիրուս աշխարհի և ի հայրենիս, բոլորվում, ամբողջանում և հզորանում է Լուսավորչի գահի և նրա գահակալի շուրջ՝ որպես մեկ եկեղեցի և մեկ ժողովուրդ:

Այս տարի էլ գահականակության տարեարձի առիթվ Մայր Աթոռուն կատարվեցին հանդիսություններ, հորելյաններ, որոնց նըկարագրությունը տպվել է ամսագրի սույն համարի հաջորդ էջերում:

Հոգեկան մեծ բերկանքով և գոհունակությամբ պետք է արձանագրել՝ այս տարի Հայոց Հայուսայէտի գահակալության տարեարձի առիթվ Մայր Աթոռում կատարված հանդիսությունները՝ Մայր տաճարի նոր զանգերի օրինությունը, հայրապետական հանդիսավոր ու պատարագի մատուցումն ու եպիսկոպոսական ձեռնադրությունը, շնորհավորություններ Վեհարանում, պաշտոնական ընդունելություններ և ապա հոկտեմբերի 5—7 օրերին ու Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակին նվիրված հորելյանական տոնակատարությունները:

4

Այսօր, ավելի քան եռեկը, կեսունևակ է,
պայծառ ու լուսավոր համերժական Մայր
Աթոռ ու Էջմիածինը իր հավատավոր զա-
վակների սիրույն, պաշտամունքի մեջ, հա-
յորդական որոնք թե՛ վերածնված Հայոց աշ-
խարհի և թե՛ պիտոքի բոլոր տարածքների
վրա իրենց հավածքն ու հայի հոգին սևողել
են դեպի ու Էջմիածինը, դեպի Լուսավորչի
աստվածակերտ Մայր Աթոռն ու նրա առա-
քեալավակի գահակալը:

«Մենք իրեն եկեղեցի և իրեն ժողովուրդի, —ասում է Վեհափառ Հայությունը սեպտեմբերի 30-ին Մայր տաճարում արտասանած իր քարոզի մեջ, —ապաստ ենք մեր պատմության ամենաբախտորոշ շրջաններից մեկը... Վերածնվեց հայ ժողովուրդը և սկսավ քայլել նոր կյանքի ճանապարհով իր պատմական հայրենիքի մի մասի վրա հաստատելով հայկական նոր պետությունը, որ ավելի քան հիսուն տարիների ընթացքում, վերաշինեց և ծաղկեցրեց իր ավերակած երկիրը անենախընթաց թափով, խաղաղության և ապահովության պայմանների մեջ սովորական ժողովուրդների եղանական ընտանիքում»:

Հայ ժողովրդի հոգևոր, հայրենասիրական, ազգային վերապարտութիւննեց, ՄայրԱթոռ և Լշմիածնի օրինության և ղեկավարության ներքո իրենց կարևոր դերն ունենան հայ եկեղեցին ու հայ հոգևորականությունը:

Հայոց Հայրապետի գահակալության 18
տարիների ընթացքում, Նորա անմիջական
շահնքերով, սրտազին աշխատանքներ կա-
տարպեցին «վերականգնելող, ամրացնելող և
ծաղկեցնելող համար անցյալում նախատակ-
ված մեր եկեղեցին», նշում է Հայոց Հայրա-
պետը: Բայց է միայն արձանագրել, որ այս-
օր հայ եկեղեցու ապրող և գործող բարձ-
րատիճան 30 հոգևորականներից 25 եպիս-
կոպուսներ և արքեպիսկոպոսներ Հայոց
Հայրապետի ձեռնաստեններ են: Այս փաստն
ինքնին պերճախոս Վկայությունն է այն հու-
սադրիչ հրոդության, որ հայ եկեղեցին
այսօր էլ նոր կյանքի է կոչված և գտնվում
է իր պատմական առաքելության և կոչման
բարձրության վրա՝ փառավորապես կատա-
րելու համար հոգևոր սպաս մեր ժողովուի:

Սեպտեմբերի 30-ին գահապրահում ու Աւրովք արքեպ. Մանուկյանը, հանուն հայ եկեղեցու լոռիթյան և հայ հոգևորականության, շնորհավորելով Հայոց Հայրապետին, ասսմ է.

«Ա. Էշմիածին Մայր Ալոռո, տասնյոթ դարերու պատկանելի և պատվական հաւատատվոյրուն մըն է: Դարերու ընթացքին մեր ժողովուրդը ինչ որ ունեցած է իբրև լավագույն, դրած է մեր ենենեցին և մասնաւորապե

Մայր Աթոռ ս. Էջմիածնին մեջ: Անհիկա այլևս հայ ժողովուրդի և նոյնիսկ ամբողջ քրիստոնեության պատմութան առջև Նվիրականացած և սրբացած հաստատություն մըն է: Տասնյոթ դարերու ընթացքին հարցուր երեսուն հոգեկից, աստվածարյազ և ազգաւեր հայրապետներ բազմած են այս սուրբ Աշոտունին վրա: Այդ հայրապետներեն յորաքանչյուրը իր միտքին և հոգիին շնորհները ավելցուցած է այս հաստատութան վրա, և այս հաստատութունը դարերու ընթացքին ճոխացած, զարգացած, Նվիրականացած և սրբացած և նոյնացած է մեր ժողովուրդի հոգիին և մեր ժողովուրդի պատմության մես:

Վեհափառ Տեր, Դուք այդ հարյուր քսանին և իմաստուն հայրապետներուն արժանավոր հաջորդն եք, և այս տասնութ տարիներու ընթացքին Զեր միտքի և Զեր հոգիի շնորհները դրշյամած եք այս հաստատության վրա: Տասնութ տարիներու ընթացքին վերածնունդ մը ունեցած է Մայր Աստո և Եղիշածինը: Վերածնունդ՝ հոգևոր կյանքին մեջ, վերածնունդ՝ մշակութային, կրթական կյանքին մեջ, վերածնունդ՝ շինարարական մարզին մեջ, որուն վրա Զեր գեղարվեստական հասկացողությունը և Զեր միտքին դրոշմը կեռնի ամեն կողմ:

Նոյն օր գահարակում Հայկական ՍՍՀ Մինհարանի սովորութեան առջնորդեալ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ U. Գասպարյանը, շնորհավորելով Հայոց Հայրապետին, ասում է.

«Զափազանց ուրախ ենք տեսնելով, որ տանը տարիների եռանդուն գործունեությունից հետո Դուք այսօք ավելի կորովի, ավելի եռանդով, քաջառողջության մեջ բազմած եք ս. Էջմիածնի գամին և շարունակում եք հաջողությամբ Ձեր բարձր առաքելությունը հոռի կմեջան Հայոց խառնիկու»:

Այսուհետև Ս. Գալստյանը Հայոց գաղտնաբառն է, որ անցնող տասնորդ տարիների ընթացքում Հայոց Հայրապետի ջանքերով ստեղծվել է «մի շատ հաստատուն կամուրջ Սովետական Հայաստանի և արտաշխարհի միջև» և սփյուռք-հայրենիք կապերը «ամրապնդվում են, ընդլայնվում և առաջիկայում խոստանում են ամենի հոռ և մեծ հեռանալուն»:

Պարու Ս. Գասպարյանը այնուհետև մի առանձին կարևորությամբ ընդգծում է Հայոց Հայրապետի խաղաղամարտական ջանքերը, ողջ աշխարհում կայլուն խաղաղության ասպարեզում, «որ այդ մեծ և շնորհակալ գործին» Հայոց Հայրապետը թերել է Իր «Բնելինակավոր մասնակցությունը» և Իր «Բնելինակավոր խոսքը տարածել աշխարհի բոլոր ամբիոններից, աշխարհի բոլոր երկրություններից»՝ պատճենառելու համար «Բայ ժո-

ղովրդի խաղաղության տեսչանքը, նրա խաղաղասիրական ձգություները աշխարհի շատ ժողովուրդներին»:

Հոկտեմբերի 7-ին, կիրակի օրը, Վեհարանում և Ներսես Ծնորհալու հորեցյանի առթիվ արտասանած իր ողջունի գեղեցիկ և բովանդակալից խոսքում, Երուաղեմի ամենապատիվ տ. Եղիշե սրբազն պատրիարքը նշում է, որ «Հայոց մեծագործ Հայրապետները» նման են «Մովսեսին, որ մորենի անկեզ բոցին վրա կարդաց իր ժողովուրդին ճակատագիրը: Երբ կյենանք Աստվածաշնչի այս պատկերին առջև, Մովսեսով խորհրդավորված, մեր միտքը կերթա մեր աստվածարյալ Հայրապետներուն, Լուսավորչեն մինչև Ն. Ս. Օծույթուն Վազգեն Ա: Անոնք այ, անշուշտ, մեր ժողովուրդի գոյության բոցին վրա կարդացին մեր ճակատագիրը և լցվեցան անով, առաջնորդելով զայն կրակե կրակ, փոթորիկե փոթորիկ, անդունին անդուն, դեպի ցեղին

լուսավոր ապագան, դեպի մեր ժողովուրդի ազատությունը»:

Մրժան և իրավ:

Արդարն, ավելի քան միսիթարական է արձանագրել բովանդակ հայ ժողովուրդի անվերապի հավատարմությունը դեպի Լուսավորչի Սթոռն ու նրա Աթոռակալը, որն իր մաքր և ամուր ձեռքերում է պահում «գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետութեան» և դեկը՝ մեր ազգային-եկեղեցական կյանքի:

Հայ հոգիների եղբայրացում և Էջմիածնի լուսի և օրինության մերքը, վերածնված մայր հողի վեմ-զգացման մեջ:

Բովանդակ հայ ժողովուրդի սրտաբուխ մալթանքն է, որ Լուսավորչի գահը հավերժորեն, միշտ պայծառ ու կանգուն մնա, և Հայոց Հայրապետի կյանքի օրերը լինեն երկար ու արևոտ, նոր իրագործումներով գեղեցկացած և պայծառացած:

«Տեր, անսասան պահիր լու միշտ Քո իսկ հիմնած Մայր Սթոռն»:

